



ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ, ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՃԱՇԿԵՐՈՅԹ ՄԷՆ-ԺԵՐԷ

Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննէսեան Մարսէի Սէն Ժերմի շրջանի հայկական համայնքին այցելութիւն տուաւ 19-20 Դեկտեմբերի շաբաթավերջին եւ պատարագեց Ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցւոյ մէջ, օգնական ունենալով շրջանի հոգեւոր հովիւ Տ. Գառնիկ Քինյ. Գարապետեանը: Պատարագի աւարտին խորանի 5 երիտասարդ ծառայողներ ծունկի եկան եւ Վահան Սրբազանը անոնց մագերէն փնջիկ մը կտրեց, ապա ձեռքերը անոնց գլխուն դնելով Հայ Եկեղեցւոյ կանոններուն համաձայն զանոնք դպիր ձեռնադրեց: Այսպիսով անոնք իրաւունք կունենան եկեղեցւոյ դռները բանալու, եկեղեցին մաքրելու, սուրբգրական հատուածներ կարդալու եւ հիւանդներու վրայ աղօթելու: Պատարագէն ետք ճաշկերոյթ մը նախատեսուած էր, գեղարուեստական յայտագրով, որու ընթացքին Ծխական Խորհուրդի ատենապետ Պրն. Մաքսիմ Սիսվալեան շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Հօր այս այցելութեան եւ կատարած ձեռնադրութեան համար: Առաջնորդ Սրբազանը նախորդ գիշեր առիթը ունեցաւ հանդիպելու Ծխական Խորհուրդի անդամներուն հետ, ժողովական ընթրիքի ընթացքին: Անոնք քննարկեցին ծուխի գործունէութիւնն ու ծրագիրները, ինչպէս նաեւ Ֆրանսայի Թեմը զօրացնելու միջոցները: Շնորհաւորութիւններ բոլորին:




ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԿՐԸՆՈՂԻ ՄԷՋ

Սրբոց Ղեւոնդեանց տօնը ձօնուած է խումբ մը հոգեւորականներու, որոնք իրենց կեանքը գոհած են հաւատքի համար: Այդ խումբին մաս կը կազմեն Յովսէփ Կաթողիկոս, Սահակ եւ Թադիկ Եպիսկոպոսներ, Արշէն, Մանուէլ, Աբրահամ, Խորէն քահանայներ եւ անոնց հեղուսական առաջնորդը՝ Ղեւոնդ: 451-ին պարսկական բանակը կը յարձակի Հայաստանի վրայ եւ տեղի կունենայ Ասարայրի ճակատամարտը: Ս. Վարդան Մամիկոնեան կը գլխաւորէ հայկական բանակը, մինչ Ղեւոնդ Երեց եւ միւս հոգեւորականները զինուորներու կողքին կը կռուին առաջին գիծի վրայ: 451-ի Ասարայրի ճակատամարտէն ետք, Ղեւոնդեան հայրերը կը ձերբակալուին պարսիկներու կողմէ, իրարմէ կանջատուին եւ վայրենի չարչարանքներով կը սպանուին: Ղեւոնդեանց տօնը կը համարուի քահանայներու տօնը, որ կը նշուի ամէն տարի Բուն Բարեկենդանի եւ Ս. Վարդանեանց տօնի նախորդող Երեքշաբթի օրը: Այս տարի Ղեւոնդեանց տօնին առթիւ 2 Փետրուար 2016-ին Վահան Եպս. Յովհաննէսեան հոգեւորականներու երկօրեայ ընդհանուր համագումար մը հրապարակեց է 1-2 Փետրուարին, Ֆրանսայի Թեմի բոլոր հոգեւորականներուն մասնակցութեամբ: Համագումարի յայտագրին մաս կը կազմեն աղօթքի պահեր, Աստուածաշունչի սերտողութիւն եւ աշխատանքային նիստեր: Հոգեւորականները զեկոյց պիտի տան եւ պիտի քննարկեն 45 Հոկտեմբեր 2015-ին գումարուած նախորդ ժողովի ընթացքին առնուած որոշումներու գործադրութեան ընթացքը: Պիտի քննարկուին նաեւ Ֆրանսայի Թեմի ընթացիկ գործերը եւ դիմագրաւած մարտահրաւերները: Համագումարը տեղի պիտի ունենայ Հայ Առաքելական Ս. Գաբրիէլ Հրեշտակապետ եկեղեցւոյ մէջ:



ՆՈՐ ԱՍՊԵՏՆԵՐՈՒ ԸՆԾԱՅՈՒՄ ՓԱՐԻՋԻ Ս. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Ուրբաթ 18 Դեկտեմբեր 2015-ի երեկոյեան Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ Մայր եկեղեցի հաւաքուած էին Երուսաղէմի Ս. Ղազարի զինուորական եւ հիւանդանոցային ուխտի ասպետները, յատուկ արարողութեան համար: Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննէսեան, որ մաս կը կազմէ ուխտին, նախագահեց արարողութեան: Հայկական Ժամերգութեան մասնակցեցան եկեղեցականներն ու Մայր եկեղեցւոյ սարկաւազները, ղեկավարութեամբ հոգեւոր հովիւ Տ. Յուսիկ Քինյ. Սարգսեանի: Երեկոյեան այս Ժամերգութիւնը նախատեսակն էր յաջորդ օր տեղի ունենալիք նոր աստիճաններու յաշխումի արարողութեան: Յաջորդ օրը 19 Դեկտեմբերի առաւօտուն արարողութիւնները սկսան ասպետներու աւանդական թափօրով, համապատասխան տպաւորիչ տարազներով: Մայր մուտքէն եկեղեցի մտնելէ ետք տեղի ունեցաւ հայկական աւանդական Ժամերգութիւն, որմէ ետք սկսաւ կարգի շնորհումի արարողութիւնը, որու ընթացքին երկու անդամներ ասպետի կարգ ստացան: Այս ասպետները կը ներկայացնեն քրիստոնէական միջ-եկեղեցական ուխտ մը, որու արմատները կը վերագրուին հայ վանականներու: Խաչակիրներէն առաջ, Երուսաղէմի պարիսպներէն դուրս գոյութիւն ունէր հիւանդանոց մը, Սուրբ Ղազարի հոգատարութեան տակ, ուր կը ծառայէին հայ վանականներ: Ս. Ղազարի ասպետներու ուխտի արմատները կը հասնին մինչեւ այդ վանականները:



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՍԸ


Առաջնորդի Գրասենեակը հաճոյքն ունի հրապարակելու Նոր Տարուան եւ Ս. Ծնունդի առթիւ Առաջնորդ Սրբազան Հօր պատգամը, հայերէնով եւ ֆրանսերէնով: Պատգամը իր ամբողջութեան մէջ կրնաք կարդալ այստեղ: Կու տանք պատգամէն մեջբերում մը. «2015-ի այս տարեվերջին, մեծ ուրախութեամբ է որ ձեզի կուղղեմ այս ուղերձը Ս. Ծնունդեան նախօրեակին: Նախ եւ առաջ ձեզի կը յղեմ առողջութեան, երջանկութեան եւ յաջողութեան լաւագոյն մաղթանքներս: Իմ պաշտօնի ստանձնման առաջին շաբաթներէն սկսեալ տեսայ իմ նախորդներուս կատարած հսկայ գործը: Երախտապարտ եմ Գերշ. Տ. Գիւտ Արք. Նազգաշեանին եւ Գերշ. Տ. Նորվան Արք. Զաքարեանին: Մեծ մարտահրաւեր մըն է որ զիս կը սպասէ: Ներկայիս մեր պարտականութիւնն է որպէս ֆրանսահայեր աշխատանք տանիլ կառուցելու եւ կազմակերպելու համար հօգը Եկեղեցի մը մեր զաւակներուն եւ թոռներուն համար: Աստուծոյ օրհնութեամբ...»



[Շարունակութիւն](#)

ԹԵՄԱԿԱՆ ՕՐԱՑՈՅՑ – 2016

Առաջնորդի Գրասենեակը ուրախութեամբ կը ծանուցանէ հրատարակութիւնը 2016-ի թեմական օրացոյցին: Այս տարուան օրացոյցը A5 չափի է, գրասենեակի օրացոյց, իրաքանչիւր էջի վրայ շաբթուան 7 օրերով: Օրացոյցը կը պարունակէ Հայ Առաքելական Եկեղեցւոյ բոլոր գլխաւոր տօները եւ ֆրանսական արձակուրդի օրերը: Ֆրանսայի ծուխերու տարեդարձներն ու մատաղի օրերը նշուած են օրացոյցին մէջ: Բաւական պարապ տեղ ձգուած է իրաքանչիւր օրուան համար, գրելու համար ժամադրութիւններն ու օրագրի նօթերը: Օրացոյցի յառաջաբանը բացատրութիւններ կու տայ տօներու մասին: Կողքը գարդարուած է հայկական աւանդական գեղեցիկ խաչով մը: Շնորհակալութիւն կը յայտնենք «Նոյեան Տապան»ին հովանաւորելու համար օրացոյցի հրատարակութիւնը: Օրացոյցէն օրինակներ տրամադրելի են Առաջնորդարանի գրասենեակին մէջ, գինը՝ 10 եւրօ, փոստով ուղարկելու պարագային՝ 15 եւրօ: Ձեր չէքերը գրեցէք Diocèse de l'église arménienne de France անունով: Յաւելեալ տեղեկութեանց համար հեռաձայնէլ Առաջնորդարան՝ 01 43 59 67 03 կամ գրել bureauduprimat@diocesearmenien.fr հասցէին:



ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ...

- «ՅՈՅՄԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՁՄԵՆ ԶԿԱՅ» Չորեքշաբթի 8 Յունուար 2016-ին ժամը 20-էն սկսեալ Հայ Առաքելական Եկեղեցւոյ Ֆրանսայի Թեմը ձեզ կը հրաւիրէ Առաջնորդարանի «Նուրիան Ֆրէնկեան» սրահը, ուր էլիզ Պօղոսեան մեզի պիտի ներկայացնէ իր մարդասիրական գործունէութիւնը Միջին Արեւելքի մէջ եւ իր գիրքը «Յոյսի թագաւորութեան մէջ ձմեռ չկայ»: Մուտքը ազատ է:
- ՃՐԱԳԱԼՈՅՑ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ: Ս. Ծնունդի նախորդող ճրագալոյցի երեկոյեան պատարագի ժամերը գիտնալու համար կապ պահեցէք ձեր ծուխի եկեղեցւոյ հետ եւ ուզեցէք արարողութիւններու ժամանակացոյցը: Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննէսեան Ս. Ծնունդի եւ Աստուածայայտնութեան տօնին առթիւ պիտի պատարագէ Ֆրանսայի Թեմի Մայր եկեղեցւոյ մէջ, Փարիզ, Չորեքշաբթի 6 Յունուարին, Առաջնորդարանէն թափօրով Ս. Յովհաննէս Մկրտիչ Մայր եկեղեցի առաջնորդուելով ժամը 10-ին: Տօնական օրերու ժամանակացոյցին համար սեղմել այստեղ:
- ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲ: Սուրբ Գիրքի սերտողութեան խումբը պիտի դադրեցնէ իր նիստերը Ամանորի եւ Սուրբ Ծնունդեան գալիք տօներու առիթով: Յաջորդ հանդիպումը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի 13 Յունուարի ժամը 20-ին, Առաջնորդարանի «Նուրիան Ֆրէնկեան» սրահին մէջ: Բոլորդ հրաւիրուած էք մեր յառաջիկայ հանդիպումին: Աւելի ջերմօրէն հրաւիրուած են անոնք, որոնք կը կարծեն որ անաստուած են կամ կը մտածեն որ եկեղեցին որեւէ դէր չունի խաղալիք մեր կեանքին մէջ կամ «յերախայից, թերահաւատից, յապաշխարողաց եւ յանմաքրից»: